

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ

II

Պարբերական մամուլը և նրա ընթերցողները—Բաղմալէպի ծակ փերսոփայութիւնները և ռէկլամները—Մ. Նալբանդեանցի երկերի հրատարակութեան սեփականատէջերը:—Մամուլի շուրջը—Գրական նութիւններ:

Ոչ մի տեղ գրականութիւնը և կեանքը իրար հետ այնպէս սերտ կապուած չեն, ինչպէս պարբերական մամուլի մէջ: Այդ տեսակէտից հալոց մամուլն էլ բացառութիւն չի գործում: Եւ տաճկահայ մամուլի մէջ մենք չենք տեսնում ժողովրդական կեանքի արտափայլումը, բայց այնտեղ էլ ուշիմ ընթերցողը կկարողանայ մամուլի միջոցով ազգային կեանքին հետևել: Կեանքը մի այնպիսի ոյժ է, որ ոչ մի կողմնակի ազդեցութիւն կարող չէ նրան արգելք հանդիսանալ և պարբերական մամուլից իսպառ արտաքսել՝ դռները որ փակեն—նա պատուհանից ներս կմանէ, պատուհանները որ փակեն—դռներից կմտնի: Միայն թերթի ղեկավարները կարող են չինական պատերով անջատել իրանց կեանքի հոսանքից և ազդեցութիւնից:

Այժմ մեր գրականութիւնն էլ, մեր ազգային կեանքն էլ ապաստան են գտել մեր պարբերական մամուլի մէջ: Ուստի պարբերական մամուլի մասին խօսելը՝ նշանակում է գրականութեան և կեանքի խնդիրներ շօշափել: Պարբերական մամուլին ծանօթ լինելը—նշանակում է ծանօթ լինել մեր գրականութեան և արդէ հասարակական կեանքին. մինչև իսկ պարբերական հրատարակութիւններ կարգայն արդէն նշանակում է կողմնակի մասնակցութիւն ունենալ գրականութեան և հա-

սարակական կեանքին: Թէպէտ և վերջին երևոյթը տարօրինակ է, բայց և այնպէս ճշտուում է, գոնէ մեր, Ռուսիայի հայերիս, վերաբերմամբ:

Մի լաւ դիտեցէք ուրիշներ են ձեր շուրջը հայերէն լրագիր և ամսագիր կարդացողները: Ես չեմ տեսնում ստացողները, որովհետեւ «խաթեր» համար հայերէն կարդալ չիմացողն էլ է ստանում հայ լրագիր կամ ամսագիր: Ոչ, խօսքս կարդացողների մասին է: Եւ ահա եթէ լաւ դիտէք դուք էլ, սիրելի ընթերցող, մեզ պէս կգաք այն տխուր եզրակացութեան, որ տասը հայ ընթերցողից, մանաւանդ ամսագիր կարդացողից, փինը անպատճառ մի որ և է կապ ունեն գրականութեան և կամ ազգային այս կամ այն կուլտուրական հաստատութիւնների հետ: Այդ տասնից մէկը անպատճառ գրական գործիչ է, միւսը դիլէտանտ է գրականութեան մէջ, երրորդը իրան բանաստեղծ է համարում, չորրորդը գրականութեան մեծ սէր ունի և կարողանում է կամ «նամակ խմբագրութեան» գրելու, կամ թերթի համար բաժանորդներ որսալու, հինգերորդը — հայ թատերասէր՝ այսինքն կիսով չափ գրական գործիչ, կիսով չափ — հասարակական. վեցերորդը հայ կրօնաւոր — ի ծնէ հայ գրասէր. եօթերորդը հայ վարժապետ — իսկական հայ հասարակական գործիչը և գրականութեան անկեղծ բարեկամը. ութերորդը հայ աշակերտը կամ ուսանողը, այդ ապագայի գրական հասարակական լոյսը. իններորդը այն հայ կինը, որ բաղդի բերմամբ հայասիրի, կամ հայ գրասէրի ամուսինն է դառել. և վերջապէս միայն տասներորդն է, որ ընթերցող է բառիս բուն մտքով և ուրիշ կապ չունի հայ կեանքի և գրականութեան հետ: Մենք մեր շուրջը տեսնել ենք այս դիտողութիւնը և եկել ենք արդէն այն տխուր եզրակացութեան, որ մեր պարբերական մամուլը չնայած իր աւելի քան հարիւրամեայ գոյութեան դեռ չի կարողացել ստեղծել ընթերցողների անհրաժեշտ դասակարգը: Ընթերցողների պակասութիւնն է, որ սպանում է մեր պարբերական մամուլը, միջոց չտալով նրան զարգանալու և ամրանալու:

Անցեալիսերը մեհր սյուտահեցիք «Բաղնիսի»

գործակալին, որը մեծ ճարպիկութեամբ ամեն տարի տասնեակ բաժանորդներ է տալիս վենետիկեցւոց օրգանին։ Խօսակցութեան մէջ ես այն կարծիքը յայտնեցի, որ գործակալը բաւականի օգուտ է տալիս Միխիթարեան վանքին, որովհետեւ, եթէ նրա եռանդը չլինէր,—իր բաժանորդներէյ (որոնց թիւը կրկնում եմ մի քանի տասնեակի է հասնում) հազիւ հինգ-վեցը մնային։ Գործակալը իհարկէ ինչ հետ համաձայն չէր և կարծում էր, որ «Բաղմավէպը» այնպիսի մի ճոխ և բազմակողմանի ու յառաջադէմ ամսագիր է, որ պէտք է զբաւէ եղածից շատ աւելի բաժանորդ և ընթերցող։ Անշուշտ «Բաղմավէպին» հրատարակիչներն և խմբագիրներն էլ այդպէս են կարծում և իրանց օրգանի 1902 թ. № 9—10-ի յառաջաբանում կոկորդիլոսի արցունքներ են թափում այն յուրի առթիւ, որ իբր թէ «Նոր-Դարը» դադարելու է։ «Սա—այսինքն «Նոր-Դարը»—այժմ ինչպէս կգրեն տեղացի թղթակիցները, երկար ժամանակէ ի վեր լոյս չի տեսներ, բաժանորդներու թիւը զգալի կերպով նուազեր է։ Եւ թերթ մը ինչպէս կը դիմանայ, երբ անըմբռնելի գաղափարի մը կուգէ ծառայել, իր միակ նստատեղին կըլլար կեղծ պահպանողականութեամբ շահագործել հասարակութիւնը.—ինչպէս կրնայ դիմանայ, երբ որոշ ու յայտնի դարու կը ցայտի անոր քննադատութեանց քիսախնդիր ոգին և այլն և այլն»։

Այս խօսքերից ներելի է մեզ անել այն եզրակացութիւնը, թէ «Նոր-Դարի» անյառաջադիմութեան պատճառը նրա ուղղութիւնն է. այդպէս չէ՞ «Հ. Ս. Երեմ.»։ Ուրեմն եթէ «Նոր-Դարը» իր ուղղութիւնը փոխէր—իմա սկսէր ջատագովել «Բաղմավէպը» և նրա աշխատակիցներին, ովքեր էլ որ նրանք լինեն—նա կ'յառաջադիմէր։ Ապա եթէ այդ այդպէս է լինելու, ինչո՞ւ ձեր համախոհները չեն յառաջադիմում։ Օրինակ «Տարագ»-ի վերջի համարից իմանում ենք, որ թէ «Մուրճ»-ի և թէ «Մշակի» բաժանորդների թիւը պակասում է. նրանց ինչո՞ւ չի օգնում չարաբաստիկ «ուղղութիւնը»։ «Մուրճի» գործերը երբէք լաւ չեն եղել և հասել են այն աստիճանի, որ նրա սեփականատէրը ստիպուած ծախեց իր օրգանը ուրիշին. նոր հրատարակիչն էլ վնաս

կրեց ու ծախեց երրորդին. երրորդի գործերն էլ լաւ չեն, չնայած, որ ուղղութիւնը հէնց էն է, որ այնքան սիրելի է (միթէ) «Բազմավէպ» ին, իսկ բովանդակութեամբ հօ տասնապատիկ լաւ է «Բազմավէպից»։ Եթէ «Մշակ»-ի գործերը լաւ լինէին, նա նախ և առաջ պէտք է վարձատրէր իր աշխատակիցներին, մինչդեռ այդ թերթում էլ դեռ տողավարձ չի հիմնուած. և յետոյ, եթէ գործերը լաւ լինէին— հրատարակիչները վաճառք չէին հանի թերթը։ Նոյնպէս անմիջիջարական է միակ շաբաթաթերթ «Տարազ»ի և միակ մանկական սմազիր «Աղբիւր»ի նիւթական դրութիւնը, չնայած, որ սրանք իսկապէս ոչ այս և ոչ այն կուսակցութեան են պատկանել։ Բաժանորդների կարօտ էին և «Արաքս»ը և «Հանդէսը» և «Թատրոնը»։ Շատ բաժանորդ չունի նաև «Ազգագրական Հանդէսը»։

Ինչից է դա. նրանց բռնած ուղղութիւնից թէ «քննադատութեան» քիւտինդիր ոգուց»։ Միամիտներ։ «Բազմավէպ»ի ղեկավարները կարծում են, որ իրանց բազմաթիւ (գուցէ և հազարաւոր) բաժանորդները— միեւնոյն ժամանակ և ընթերցողներ են. կարծում են նոյնպէս, որ այդ ընթերցողները համակրելով թերթին և նրա բովանդակութիւնից գոհ—տարէց տարի բաժանորդ են գրւում։

Ինչպէս չէ...

Ձեր «օրգանիզացիան», կազմակերպութիւնը, գործակալութիւնն է, որ տալիս է Ձեզ այդքան բաժանորդ։ Եթէ վեներեկեցիք փորձեն մի տարի առանց իրանց գործակալների (վեներեկի միաբանների, նախկին սաների և այլ հայ-կաթոլիկ երիտասարդների) հրապարակել իրանց օրգանը—նրանք կտեսնէին թէ ինչքան բաժանորդ ունին, որովհետև միմիայն իսկական ընթերցողները բաժանորդ կմնային... Իսկ որովհետև ընթերցողներ թիւը մեր մէջ շատ քիչ է, հասկանալի է, որ ամեն տեղ էլ բաժանորդների թիւը տասնապատիկ կապուտի այժմուայ հետ համեմատած։

Եւ մենք շատ ուրախ ենք, որ «Բազմավէպ» բազմաթիւ բաժանորդները այն «կրաւորական» դասին են պատկանում, որ հայ թերթի կամ

ամսագրի բաժանորդ են գրուում լոկ «խաթրի համար», Հակառակ դէպքում պէտք է խոստովանենք, որ մեր ընթերցող հասարակութիւնը, առնենք հենց Ռուսիայում ապրողները, «Մուրճ»-ին, «Նոր-Դար»-ին, «Լուծալ»-ին, «Մշակ»-ին, «Հանդէս Ամսօրեային» և ուրիշ լուրջ պարբերական հրատարակութիւններին գերադասում են «Բազմավէպ»ի թերթը գրքոյները, որոնց նշանաբանն է «de omnibus et de nihilo» լատինական ասացումը, որ թարգմանի «ամեն բանի մասին և միևնոյն ժամանակ ոչ մի բանի մասին» և կամ ռամկօրէն «վինէգրէտ»։ Եւ ինչպէս վինէգրէտ չլինի, քանի որ նոյն «Երեմ. Հ. Ս.»-ը գրում է համ առաջնորդողներ, համ քննադատականներ, համ պատմական ուսումնասիրութիւններ, համ էլ վէպեր, գուցէ և ոտանաւորներ։ Ետ մազալու է «Տուրկիներ», որ կոչւում է «ազգավէպ», երևի որպէս զի համեստ և աստուածապաշտ ընթերցողը չկարծէ, թէ արժանապատիւ հայրը «սիրավէպ»-ով կամ «նորավէպ»-ով (նովելլա, օրինակ Բոկկաչիոյի) է զբաղուած։ Բայց վենետկեցիք շատ գործնական մարդիկ են և նրանց մօտ, ինչպէս լաւ և հմուտ, այլ և ժլատ գործարանատիրոջ մօտ ոչ մի բան իզուր չի կորչի, այլ ընդհակառակը ամեն բանից, ամեն մի յօդուածից, ամեն մի կլիշէից կաշխատեն ստանալու այնքան, որքան որ կարելի է և մինչև իսկ կարելի չէ։ Օրինակ կարդացէք նրանց յայտարարութիւնները. դուք այնտեղ շատ բան կգտնէք՝ այդ «Գեղունի», վաղը «որբունի», միւս օր ես ինչ գիտեմ ինչ ունի. բացառիկ «թերթեր», «յաւելուածներ», «կազմեր» և այլն և այլն։ Թող չկարծեն արժանապատիւ հայրերը, որ ես չեմ գնահատում նրանց այդ եռանդը, որի իսկական նպատակն է փող ճարել «Բազմավէպ» և վաճառի համար։ Ընդհակառակը, ես կարծում եմ, որ ամեն մի հրատարակիչ պէտք է դիմէ այս կամ այն միջոցներին իր հրատարակութիւնները տարածելու համար. և «Գեղունին» այդ տեսակէտից շատ գեղեցիկ միտք է։ Բայց նախ ինչ հարկ կայ գուռնայ փչել, թէ դուք ազգ էք երջանկացում Զեր հրատարակութիւններովը և ապա ամեն բան չափ ու սահման ունի։ Այսպէս օրինակ ճրտեղ տես-

նուաճ կայ, որ խմբագիրը մի վէպ սկսի տպելու իր ամսագրի մէջ, յետոյ դադարեցնի ու իր օրգանի շապկի վերայ պատկերազարդ մի ռեկլամ գետեղէ, ինչպէս այդ արել է Հ. Երեմ.-ը «Բազմավէպ» № 12. ահա այդ ռեկլամը՝

Տուրկին

Այն նոր ազգավէպը որուն առաջին մասը Հ. Երեմ. սկսաւ հրատարակել «Բազմավէպ» ի մէջ, այժմ ամբողջովին լոյս տեսած է, և առանձին զարդարուած է վեց գեղեցիկ պատկերներով, որոնց շարադրութիւնը (? Բնչ ոճ) վիպագրին (ն ?) է, իսկ նկարիչը հռչակաւոր իտալացի արուարելիստ ճիւղթիւնն։ Այն ընթերցողներն, որ հետաքրքրուեցան այդ ազգավէպով, այժմ անոր ամբողջութիւնը կրնան կարդալ այս հատորիս մէջ, որ կը բաղկանայ քառածալ միջադէպ տասնեակ թերթերէ։—Վէպն Արտաշէս Բ.-ի ժամանակուան դէպքերէն առնուած է. նպատակն է հայր ուն (—Բնչ) և ազգաշնորհ գաղափարները հրավառել, հին ու մոռցուած դիւցազնական և հեթանոսական պատմութիւնը վէպի հրապուրով մատչելի ընել ներկայ ամբողջ հայ սերունդին։

Գինն է ֆր. 2, 50 կամ 1 ռուբլի։

Հասցէ Imprimerie Armenienne, S. Lazare Yenise (Italie)։

Այս ռեկլամը ծայրէ ի ծայր զայրացուցիչ մի բան է։ Խմբագիրը տալիս է ընթերցողին մի վէպ, նրա հետաքրքրութիւնն է շարժում և փոխանակ բաւականութիւն տալու այդ հետաքրքրութեանը, յայտարարում է, թէ տուած հինգ ռուբլին քիչ էր, մի ռուբլի էլ տուր։ Սա ռեկլամի վատ կողմերից նիւթակոտն է։ Իսկ բարոյականը այն է, որ հեղինակը ազգասիրութեան պատրուակով միամիտ ընթերցողի գրպանն է մտնում։ Դրա համար է, որ սրամիտներից մէկը բառ է հնարել агра-серство...

«Բազմավէպ»-ին հետևելով ես չեմ կարող մի եզրակացութիւն էլ չանել նրա խմբագիր-հրատարակչների մասին։ Այդ ու ձախ կեղծաւորութիւն անելով, ազգասիրութեան մասին խօսելով ու անխորականութիւն կոչելով հանդերձ—նրանք միևնույն ժամանակ ատելով

ատում են ս. Էջմիածինը, նրա միաբանները և այն ամեն հրատարակութիւնները և հրապարակախօսներին, որոնք աշխատում են ս. Էջմիածնի վարկը որքան կարելի է բարձր պահել: Իբրև ապացոյց կարող են ծառայել այն մշտական յարձակումները, որոնց ենթակայ են «Նոր-Դարը», «Լուսան» և «Արարատը», իրենց գրախառն աշխատակիցներով. այն սիրելիութիւնը, որով «Բազմավէպի» էջերի վերայ արտայայտւում են «Մշակ» և այլոց յարձակումները ս. Էջմիածնի և հայ հոգևորականութեան վերայ (օրինակ տես 1902 թ. էջ. 485) և կամ այնպիսի անվախ սրախօսութիւններ, ինչպիսին օրինակ, նույն «Հ. Ս. Երեմը» գործածում է «Արարատի» հայր խմբագրի վերաբերմամբ՝ «Դեռ որքան կրնայ սպասուիլ (Աստուածաշնչի հրատարակութիւնը).— ահա հարցում մը «Արարատ»ի սրագլուի խմբագրին»...

Գուցէ մէկը մեզ հարցնի՝ «եթէ այդպէս է, ապա Հայոց Հայրիկի ոտանաւորներին նրանք ինչու են տեղ տալիս»:

Կարծում էք յարգանքներէն է կամ գնահատածներէն. կսխալուիք:

Ռէկլամի համար է:

— Հայոց Հայրիկը կմասնակցէ, ուրեմն նա համարում է թերթին, ուրեմն մենք էլ, Հայրիկի համարողներս— օգնենք այդ թերթին. այսպէս կասեն մի քանիսը:

Միւսներն էլ կասեն՝

— Աշխարհահռչակ ազգասէր Հայրիկ կմասնակցէ թերթին. ուրեմն թերթը ազգասիրութեան է նուիրուած. օգնենք ուրեմն նրան:

Վերածելով գործնականին, մենք կտեսնենք, որ այստեղ էլ նրանք շահագործում են գաղափարը, հաւատարիմ մնալով լիսուսականների այն սկզբունքին թէ «նպատակը սրբագործում է միջոցները»:

Ո՛ւր ես ազնիւդ Միքայէլ Նալբանդեան:

Ուր էր, որ մեր ժամանակներում ապրէիր և քո ազդու և կծու խօսքով մերկացնէիր այն մարդկանց, որոնք դիմակահանդէս են սարքել գրական հասարակական ասպարիզի վերայ և դեռ իրաւունք ունին խօսելու

«անաչառութեան», «եղբայրութեան», «ազատամտութեան» և «յառաջադիմութեան» մասին:

Այժմ յոյս կայ, որ կոմս Էմմանուէլի գրուածքները յարութիւն կառնեն և յոյս աշխարհ կոտեսնեն, չնայած, որ նրա ժառանգները ամեն կերպ աշխատում էին արգելք լինել դրան: Դուք երեւի կզարմանաք և կհարցնէք թէ ինչո՞ւ, ինչ պատճառով: Տգիտութիւնից և ընչասիրութիւնից—կպատասխանեմ ես: Տողերիս գրողը արդէն մի քանի տարի է—ինչպէս այդ կվկայէ և պ. Եր. Շահազիզը, բանակցութիւն ունէր Մ. Նալբանդեանցի ժառանգների հետ և այս ու այն պայմաններով խնդրում էի տալ ինձ կամ ծախել ինձ անմահ հրապարակախօսի երկերի հրատարակութեան իրաւունքը: Մի անգամ այդ պարոնները համաձայնութիւն էլ տուին, յետոյ ետ աւին իրանց խօսքը: Այսպէս երկար քաջքշուց յետոյ վերջ ի վերջոյ Նոր Նախիջևանի Բարեգործ. Ընկերութեանը յաջողուեց նրանցից իրաւունք ստանալ երեք տարուց ոչ ուշ հրատարակել 2400 օրինակ: Մենք ի սրտէ ողջունում ենք Բարեգործ. Ընկեր. այդ քալը, բայց ափսոսում ենք, որ Ընկերութիւնը ստիպուած է ալդպիսի պայմանների համաձայնել, պայմանների, որ ուղղակի վնասակար կարող են լինել հրատարակութեան տարածուելուն: Եւ ահա թէ ինչո՞ւ. պայմանի մէջ առած է, որ 2400 օրինակ հրատարակելուց յետոյ ընկերութիւնը կորցնում է իր իրաւունքը և ժառանգները իրաւունք են ստանում իրանք անել նոյն հրատարակութիւնը: Այժմ երեւակայեցէք, որ Բարեգ. Ընկեր. հրատարակեց Մ. Նալբանդեանցի երկերը երկու հատորով և գինը նշանակեց 1 ռ. 50 կ. ժառանգները գործադրելով իրանց իրաւունքը իսկոյն իրանք էլ կհրատարակեն (կամ իրանց սեփականութիւնը կծախեն մի ուրիշին) և գինը կնշանակեն 1 ռ... Այն ժամանակը ով պէտք է գնէ Բարեգ. Ընկեր. աւելի թանգ արժեցող հրատարակութիւնը: Իսկ մեծապատիւ պ. պ. ժառանգները այդ կարող են անել, որովհետեւ այնքան էլ ընչասէր են, որքան և տգէտ. սրա վերայ էլ դեռ աւելացրէք այն, որ իրանց «էմճէօղլուից», այսինքն Միք. Նալբանդեանից, այդ մտաւորապէս և բարոյապէս հա-

րուստ մարդուց, — ժառանգաբար ստացել են միմիայն նրա երկերի հրատարակութեան սեփականութեան իրաւունքը: Խեղճ ժառանգութիւն, այնուամենայնիւ ժառանգութիւն, որը կամին նրանք շահագործել ոչ պակաս քան «Բազմավէպի» այժմեան ղեկավարները շահագործում են իրանց ձեռքը ընկած ժառանգութիւնները:

Գրած ըուպէիս մեր հասարակական հրատապ խնդիրներից մէկը որբանոցի գործն է: Իր ժամանակին բաւականին աղմուկ հանած պ. Թումայեան, դաւանանքով բողոքական, իր գործակալի միջոցով Պարսկաստանից և ս. Էջմիածնից հայ որբեր է հաւաքում և Վեհ. Հայրապետի հաճութեամբ և օգնութեամբ տեղափոխում է արտասահման՝ իր հաստատած որբանոցի մէջ տեղաւորելու նպատակով: Փարիզում այդ բանին ընդդիմանում են Վառժապուհ քահանան, պ. Էքնայեան և այլք ու մի հնարով որբերին Թումայեանի գործակալի ձեռքից խլում են ու Պ. Էքնայեանի խնամքին են յանձնում: Տեղի է ունեւում տրագիկոմիկական միջադէպ. — բարեգործներ կան, իսկ որբեր չկան, որ այդ բարեգործներին գոհացում տրուի: Այսպէս է երևում առաջին ըուպէին. լետոյ հարցը պարզւում է: Վառժապուհ քահանան փաստերը ձեռին ապացուցանում է, որ Լօնդոնում ոչ մի որբանոց չկայ և Թումայեանը որբերին շահագործում է իր օգտին: Թումայեանը ի հարկէ հակառակն է ասում, մէջ տեղ է ձգում սրբազան Իւթիւճեան առաջնորդին, որը վաւերացնում է Թումայեանի խօսքերը: Հեռագիրներ և նամակներ են փոխադրւում ս. Էջմիածնի, Պարիզի և Լօնդոնի միջև: Այդ մասին սկսեցին խօսել և վիճել լրագրները, մասնաւորապէս Գովկասի թերթերից այդ հարցով զբաղուեց «Նոր-Դար»-ը: Այնուամենայնիւ հարցը դեռ չպարզուեց լիովին:

Սրանից մի քանի ամիս առաջ էլ ս. Էջմիածնից մի կաթօլիկ վարդապետ էր կոնդակ ստացել և իրաւունք փող հաւաքելու. այս անգամ նոյնը տրուել է մի բողոքականի: Երկու դէպքումն էլ շնորհընկալ օ-

տարադաւան և ս. Եջմիածնի հետ առնչութիւն չունեցող շահագործողները—բախտախնդիր անձնաւորութիւններ են:

Ցաւալի է դա և վերին աստիճանի ցաւալի: Մասնաւորապէս իմ ապրած տեղում այդ երկու դէպքերն էլ չարաչար վնասեցին Կիպրոսի որբանոցի համար փող հաւաքելու գործին: Ազնիւ պարոն Քիւրքճեանը թող իմանայ, որ մենք մեր խոստումը կկատարենք և փող կուղարկենք, բայց հաւաքելը կրկնապատիկ դժուարացաւ, որովհետեւ նուիրողներից մի քանիսի հաւատը ղէպի գործը կորաւ: Նուիրողները ամենայն իրաւամբ ինձ հարց են տալիս «արդեօք Կիպրոսի որբանոցն էլ Թումայեանի որբանոցների տեսակից չէ»—և թէպէտ և մենք փաստերը ձեռներս ապացուցանում ենք հակառակը, այնուամենայնիւ Թումայեանի գործը «տալ չունենք» համար հող և պատրուակ ստեղծեց:

Բայց բանը նրանումն է, որ «Թումայեանի որբանոց» ճիշտ որ իրապէս գոյութիւն ունի Լօնդօնում, միայն նա շատ հեռու է այն երանելի պատկերից, որը նկարագրել է «Մշակ»-ի վեներեմիկեան աշխատակիցը ի պաշտպանութիւն Թումայեանի: Բայց թէ ինչ է այդ որբանոցը, ինչ տեսակ են խնամում այնտեղ խեղճ տաճկահայ որբերը և ինչ է նրանց սպասում Լօնդօնի պէս քաղաքի մէջ—երևում է այն նամակներից, որոնք ուղղել են այդ որբանոցի սաներից ոմանք Տ. Վռամշապուհ քահանային և պ. Ա. Չապանեանին և որոնք զետեղուած են «Անահիտ»-ի վերջին համարներում:

Առաջին նամակը:

«Մեզմէ էն փոքրը h tel-ի մը մէջ դռնապան մ է, իրեն եղբայրը տան մը մէջ չարաչար սպասաւորութիւն կընէ, կօշիկ ու պատառաքաղ մաքրելով, խեղճուկրակ վիճակի մը մէջ, ուրիշ մը դեղարանի դեղերը ձեռքի կառքով տեղէ տեղ փոխադրել, միւս մը գործակալութեան մը ծրարները «համալը»-ի պէս հոս ու հոն կը տանի, ուրիշ մը ֆապրիքայի մը մէջ գործաւորութիւն կընէ, մին՝ գրաշար, ուրիշ մը աման լուացող՝ ճաշարանի մը մէջ, եւ դեռ ասոնց նման զլուելի շարք մը, որոնց վարձատրութիւնը նոյն իսկ անկարող է գիրենք ապրեց-

նել, այնպէս որ նիւթական սպառնացող վիճակի մը մէջ կը գտնուէինք։

«Օրն ի բուն կը ջանար մեզ էշու չափ աշխատցնել, դիտակցաբար խօշնդոտ կանգնելով մեր ինքնադարգացման ամէն մէկ յամառ ջանքերուն։ Այս մասին գաղափար մը կ'ալմելու համար երեւակայեցէք որ ամբողջ որբանոցին հսկայ գործերը կը կատարուէին միմիայն մեր ձեռքով, մանաւանդ վերջին երկու երէք տարուան ժամանակամիջոցին, ինչպէս պարտիդպանութիւն... ախոռապանութիւն եւ կառապանութիւն, որ յանձնուած էր 14 տարեկան մատղաշի մը, որուն միտքը այդ նեխութեան մէջ գրեթէ փոտելով, մտաւորական էն տկար վիճակին մասնուած է այսօր խոհարարութիւն, լուսարարութիւն և լուսցարարութիւն, այսինքն ամբողջ տղոց ու ընտանիքին ամանները լուալ, սրբել և ամբողջ որբանոցը, Թումայեանի ընկարանին հետ մէկտեղ, աւլեր, մաքրել ու լուալ։ Ու այս ահագին աշխատանքէն վերջ մեր վիշին կը ծանրանար և գրաշարութեան ու տպագրութեան անհատնում ու անտանելի գործը ևս։

Ճերեակայեցէք ուրեմն, սրբազան հայր, թէ այսչափ մեծ աշխատութիւններէ վերջ ինչպէս կրնար մեզ մտաւորապէս դարդացնել, որուն համար մեզ բերած մասնաւորապէս խոստմնաւատ. և իր այս խոստումներէն ոչ մէկը չկատարելով հանդերձ, յաճախ յանդգնութիւնն ալ ունեցաւ վռնտել ու լքել զանոնք որ իր խոստումը իրեն յիշեցնելու համարձակած էին։

«Այո՛, շատ ճիշտ է որ մեզ իբրեւ մուրացկաններ՝ թրքական ֆէսն ու շալվարը վրանիս, 5 տարի շարունակ թափառաշրջիկ աշուղներու պէս միթինկներու ամպիոնները բարձրացնելով մեզ շահագործած է, լոկ իր արծաթապաշտ ոգիին յագուրդ տալու համար, և երգերը զոր կերգէինք իբր զուտ հայկական երգեր՝ Թումայեանի յայտարարութեամբ, բոլորն ալ թարգմանութիւններ էին անգլիերէն հոգեւոր երգերուն...»

Երկրորդ նամակ

«Մտոյդ աղբիւրներէ կիմանանք որ այժմ Բարիկ կը գլուխուին այն որբերը զոր պատ. Թումայեան ճամբայ հանել տուած էր Պարսկաստանի և Ռուսաստանի խորշերէն։ Բայց լուրը (որ շատ ուրախառիթ է) կը սորվեցնէ մեզ որ ալգայիներ չեն թոյլատրեր որ որբերն Լոնտոն գան, անոնք ալ մեր յոռի և դժբաղդացնող վիճակին չհասցնելու համար։ Մենք երկար բա-

քակ գրելու ժամանակ չունինք, քանի որ վաղուց ըստ բաւականին ընդարձակօրէն ձեզ գրած ենք... Պէտք է որ շտապէք խոչընդոտ կանգնիլ այդ ամբարտաւան ու արիւժած (?) դահիւժին որ չկարողանայ այդ մատողաշ հոգիներն ալ մեղի պէս անտէր անտէրունչ ձգել Լոնտոնի հսկայ փողոցներուն մէջ։ Մենք չենք ուզեր որ անոնք ալ Լոնտոնի մէջ վերջապէս տուներու մէջ սպասաւորներ, օթէյներու մէջ դռնապաններ ու գործաւորներ դառնան իրենց մատողաշ հասակին մէջ, և այլն։

Սրա վերայ ոչինչ ունիմ աւելացնելու, միայն Ձեր ուշադրութիւնն եմ դարձնում այն հանգամանքի վերայ, որ տաճիկների սրից ազատուած որբերի անբաղդութեան պատճառ են դառնում. ս. Եղմիածնի ներկայացուցիչ եպիսկոպոսը և բողոքական, բայց ինտելիգէնտ մի մարդ...

«Ազգը կյառաջագիմէ կոր»։

Օտար լեզուներով լոյս են տեսել մի քանի հետաքրքրական ուսումնասիրութիւններ Հայկական հարցի, Հայոց պատմութեան և հին հեղինակների և Հայոց նորագոյն գրականութեան մասին։ Նրանցից լիշենք՝ հռչակաւոր գերմանացի գիտնական Բէռնշտէյնի և Ֆրանսիացի պատմաբան Ալբէր Վանդալի գրուածքները, երկուսն էլ Հայկական հարցի և ծածկահայերի դրութեան մասին։ Պ. Ա. Չօպանեանը ծանօթացնում է Լեռնացիներին մեր բանաստեղծների հետ, որոնց երկերից ընտրել, թարգմանել ֆրանսերէն և առանձին գրքով է հրատարակել։ Հայ ընթերցողներին լաւ ծանօթ հայագէտ պ. Իւրիյ Վսեկլովսկին ռուս թերթերում և ամսագրներում հրատարակեց մի շարք յօդուածներ մեր գրականութեան վերաբերեալ։ Լուր կայ, թէ երիտասարդ գիտնականը շուտով առանձին գրքով է հրատարակելու իր բոլոր հին և նոր յօդուածները Հայոց գրականութեան վերաբերեալ։ Ի սրտէ ցանկանք յաջողութիւն այդ ցանկալի հրատարակութեան։

ՄԻՆԱՍ ԲՆԴՐԱԲՐԵԱՆ